ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

✆ 0256-2-14-75
էլ. փոստ:
loriberdhamaynq2017@mail.ru

06.02.2026թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

Լոռի Բերդ համայնքում 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի առաջարկների ներկայացման և նախնական գնահատման փուլի արդյունքների ամփոփման նիստի

Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ

Ս. թ. փետրվարի 06-ին, ժամը՝ 12:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի առաջարկների ներկայացման և նախնական գնահատման փուլի արդյունքների ամփոփման նիստը: Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ՝ Էդուարդ Մելիքսեթյանը, նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Վահրամ Պապիկյանը, Մարգարիտա Հովսեփյանը, Մարինե Սահինյանը, Լիլիթ Առաքելյանը, Անահիտ Շահինյանը և Արմինե Ասուլյանը:
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Մելիքսեթյանը նախ հայտնեց, որ ըստ պլան-ժամանակացույցի ավարտվել է մասնակցային բյուջետավորման առաջարկների ներկայացման փուլը: Ներկայացվել են 10 առաջարկներ:
Հանձնաժողովի անդամները առանձին քննարկեցին ներկայացված առաջակները և որոշեցին 10 առաջարկներն էլ կդրվեն քվեարկության: Առաջարկները հիմնականում ուղղված էին բնակավայրերի համայնքային կենտրոնների բարեկարգմանը, կանաչապատմանը և մարզասարքերով խաղահրապարակների համալրմանը և գերեզմանատան ցանկապատների բարեկարգմանը:
Նիստի վերջում հանձնաժողովի անդամները մասնակցային բյուջետավորման առաջարկների ներկայացման և նախնական գնահատման փուլը գնահատեցին դրական, իսկ հանձնաժողովի նախագահ՝ Էդուարդ Մելիքսեթյանը ըստ պլան-ժամանակացույցի հայտարարեց ներկայացված առաջարկների համար հանրային լսումներ իրականացնելու փուլի վերաբերյալ:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ ..... Է. Մելիքսեթյան

Հանձնաժողովի անդամներ՝ ..... Վ. Պապիկյան

..... Մ. Հովսեփյան

..... Լ. Առաքելյան

..... Ա. Շահինյան

..... Ա. Ասուլյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ..... Մ. Սահինյան